


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում /վերլուծություն/

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 106238 գործարքներ, որոնց քանակը 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 9.8%-ով:


2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ



իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 29080 օտարման գործարքների 77.2%-ը կազմել են առուվաճառքները, 21.7%-ը՝ նվիրատվությունները և 1.1%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 37.5%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.3%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:



2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 29.7%-ով: 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 7859 առուվաճառքի գործարքների 66.7%-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 13.7%-ով:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/	
	հունվար- սեպտեմբեր 2009թ.	հունվար-սեպտեմբեր 2008թ.
Կենտրոն	473300	479800
Արաբկիր	356200	405100
Քանաքեռ-Զեյթուն	276300	305400
Նոր-Նորք	232200	271200
Ավան	233800	267600
Էրեբունի	249200	270200
Շենգավիթ	242200	278000
Դավթաշեն	261400	289400
Աջափնյակ	237800	274600
Մալաթիա-Սեբաստիա	225500	262100
Նուբարաշեն	141600	152000
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	266300	296000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 10.0%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա Երևան քաղաքում 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ կնվազեն շուրջ 22.8%-ով:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2466 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 34.7%-ով:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի

բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		հունվար- սեպտեմբեր 2009թ.	հունվար-սեպտեմբեր 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	134200	127400
	Ապարան	42100	33200
	Թալին	48100	42800
Արարատ	Արտաշատ	89700	97800
	Մասիս	128700	127000
	Վեդի	87600	79300
	Արարատ	83700	60900
Արմավիր	Վաղարշապատ	166500	163500
	Արմավիր	116200	118900
	Մեծամոր	79800	78700
Գեղարքունիք	Սևան	91400	89900
	Գավառ	47900	46100
	Մարտունի	78700	67100
	Վարդենիս	33200	31200
	Ճամբարակ	18500	16000
Լոռի	Վանաձոր	92300	91100
	Ստեփանավան	53800	46100
	Սյիտակ	72200	61100
	Ալավերդի	33300	30200
	Տաշիր	35300	30900
	Թումանյան	6000	5600
	Շամլուղ	3400	3200
	Ախթալա	13800	12800
Կոտայք	Աբովյան	143700	169600
	Նոր Հաճն	133700	123500
	Բյուրեղավան	99300	99700
	Եղվարդ	121400	115900
	Հրազդան	63300	66500
	Ծաղկաձոր	179200	147700
	Չարենցավան	86400	88300
Շիրակ	Գյումրի	107300	97900
	Արթիկ	59500	54500
	Մարալիկ	30500	26800
Սյունիք	Գորիս	123900	103200
	Կապան	106800	87900
	Միսիան	89100	71400
	Մեղրի	54900	46100
	Ագարակ	33000	28900
	Քաջարան	56800	47500
	Դաստակերտ	7800	7000
Վայոց Ձոր	Վայք	74300	74200
	Եղեգնաձոր	109000	95400
	Ջերմուկ	121400	125400
Տավուշ	Դիլիջան	94900	91200
	Իջևան	137500	120400

	Բերդ	42800	38700
	Նոյեմբերյան	33600	30000
	Այրում	23400	21100

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 7.3%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա հանրապետության մարզերում 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ կնվազեն շուրջ 7.9%-ով:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2902 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 701, մարզերում միասին վերցրած՝ 2201: 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 34.4%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 29.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 35.7%-ով:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/	
	հունվար-սեպտեմբեր 2009թ.	հունվար-սեպտեմբեր 2008թ.
Կենտրոն	498200	493900
Արաբկիր	394600	417800
Քանաքեռ-Զեյթուն	304400	314300
Նորք-Մարաշ	302100	282800
Ավան	264800	275500
Էրեբունի	278500	276200
Շենգավիթ	269200	282100
Դավթաշեն	295700	299800
Աջափնյակ	271900	283900
Մալաթիա-Սեբաստիա	260000	274800
Նուբարաշեն	156700	157200
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	299600	305300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 1.9%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների,

մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա Երևան քաղաքում 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ կնվազեն շուրջ 15.8%-ով:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		հունվար-սեպտեմբեր 2009թ.	հունվար- սեպտեմբեր 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	140900	130900
	Ապարան	44500	36200
	Թալին	51200	46000
Արարատ	Արտաշատ	98000	102200
	Մասիս	140100	131300
	Վեդի	92500	86400
	Արարատ	86200	65400
Արմավիր	Վաղարշապատ	176200	167400
	Արմավիր	124300	122500
Գեղարքունիք	Սևան	98800	92100
	Գավառ	54900	48200
	Մարտունի	82700	71800
	Վարդենիս	37600	33600
	Ճամբարակ	22100	20100
Լոռի	Վանաձոր	100400	95600
	Ստեփանավան	57400	51100
	Սպիտակ	75000	65300
	Ալավերդի	36400	32900
	Տաշիր	38700	34500
	Թումանյան	10300	9800
	Շամլուղ	7400	6600
	Ախթալա	17600	15800
Կոտայք	Աբովյան	162500	177600
	Նոր Հաճն	142600	129000
	Բյուրեղավան	109100	102900
	Եղվարդ	128800	120500
	Հրազդան	71200	70200
	Ծաղկաձոր	284800	227000
	Չարենցավան	94100	91100
Շիրակ	Գյումրի	116800	101200
	Արթիկ	63000	57600
	Մարալիկ	33900	31000
Սյունիք	Գորիս	129500	107200
	Կապան	113500	91200
	Սիսիան	93100	73800

	Մեղրի	57700	49200
	Ագարակ	35600	31900
	Դաստակերտ	10400	10200
Վայոց Ձոր	Վայք	79700	78200
	Եղեգնաձոր	114700	100200
	Ջերմուկ	109300	80200
Տավուշ	Դիլիջան	108200	97000
	Իջևան	143700	124100
	Բերդ	45500	40600
	Նոյեմբերյան	36600	35400
	Այրում	25200	22800

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 11.0%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա մարզերում 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ կնվազեն շուրջ 4.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 10272 միավոր /5885.12 հա/ հողեր, որից Երևանում՝ 611 միավոր /251.78 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4840 միավոր /5039.33 հա/, որից Երևանում՝ 26 միավոր /4.91 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 3742 միավոր /526.10 հա/, որից Երևանում՝ 437 միավոր /146.39 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1443 միավոր /172.18 հա/, որից Երևանում՝ 137 միավոր /65.35 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 132 միավոր /103.49 հա/, որից Երևանում՝ 11 միավոր /35.14 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 71 միավոր /33.21 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 26 միավոր /6.14 հա/ ընդհանուր մակերեսով,
- ջրային հողեր՝ 17 միավոր /3.97 հա/,
- անտառային հողեր՝ 1 միավոր վարձակալության իրավունքի վաճառք /0.70 հա/:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 9049 միավորի /5046.24 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 526 միավոր /239.97 հա/, նվիրատվության գործարքներ՝ 1076 միավոր /772.49 հա/, որից Երևանում՝ 71 միավոր /9.25 հա/ և փոխանակության գործարքներ՝ 147 միավոր /66.39 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /2.56 հա/:

Հանրապետությունում 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 42.5%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 34.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 48.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի

նկատմամբ աճել է 42.0%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1056.31 հա, որից 996.67 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 27.1%-ը կամ 2455 գործարքներ /1912.38 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 174 միավոր /144.86 հա/, իսկ 71.6%-ը կամ 6483 միավորը /3066.27 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 350 միավոր /95.10 հա/: 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 111 գործարք /67.59 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, անտառային, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	5	1.99	98	123.47	71	19.40	25	4.85	6	33.15	277	18.70	42	38.40
Արագածոտն	142	602.93	2	5.90	11	1.20	71	6.98	355	274.48	1	0.09	222	21.93	10	0.91
Արարատ	37	68.81	22	4.95	81	8.26	112	1.23	545	288.42	10	10.31	448	38.64	33	0.75
Արմավիր	77	257.41	7	3.52	8	0.98	85	4.06	630	739.27	3	0.03	464	45.64	37	5.40
Գեղարքունիք	26	101.88	2	0.63	57	4.86	59	6.82	343	234.72	0	0.00	121	13.41	15	3.23
Լոռի	24	12.68	6	1.23	66	5.90	123	2.68	297	178.78	3	0.43	265	39.74	28	1.40
Կոտայք	158	252.53	27	10.17	192	12.72	183	6.23	708	476.08	4	0.51	592	52.34	61	8.03
Շիրակ	29	63.77	9	1.52	92	27.84	87	3.76	274	262.92	1	0.20	60	8.07	28	1.27
Սյունիք	31	130.90	8	3.79	6	0.26	53	2.56	106	128.15	3	1.00	33	2.85	11	1.94
Վայոց Ձոր	59	68.18	1	21.50	53	4.11	60	1.05	109	31.87	0	0.00	41	4.15	16	2.73
Տավուշ	22	24.91	7	1.33	55	2.97	90	7.01	116	58.20	0	0.00	59	5.33	20	7.64
Ընդամենը	605	1584.00	96	56.53	719	192.57	994	61.78	3508	2677.74	31	45.72	2582	250.80	301	71.70

Ստորև ներկայացվում է 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի:

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	149	22.10	5	1.99	85	3.43	59	16.68	25	122.76	0	0.00	0	0.00	13	120.04	12	2.72
Արագածոտն	8	1.97	0	0.00	2	0.11	6	1.86	216	614.94	140	602.84	2	5.90	9	1.08	65	5.12
Արարատ	30	1.40	3	1.09	1	0.002	26	0.31	219	80.25	34	67.22	19	3.86	80	8.25	86	0.92
Արմավիր	15	0.63	1	0.001	1	0.06	13	0.57	147	251.51	62	243.60	6	3.52	7	0.91	72	3.48
Գեղարքունիք	9	0.50	0	0.00	5	0.35	4	0.15	135	113.68	26	101.88	2	0.63	52	4.50	55	6.67
Լոռի	18	0.90	0	0.00	9	0.74	9	0.16	200	21.44	23	12.54	6	1.23	57	5.15	114	2.52
Կոտայք	49	2.32	3	0.14	14	1.18	32	1.00	496	275.6	143	248.79	24	10.03	178	11.55	151	5.23
Շիրակ	52	27.03	2	0.37	24	25.42	26	1.24	164	68.29	28	62.20	7	1.15	68	2.42	61	2.52
Սյունիք	7	0.19	0	0.00	0	0.00	7	0.19	91	137.32	31	130.90	8	3.79	6	0.26	46	2.37
Վայոց Ձոր	7	0.20	0	0.00	0	0.00	7	0.20	166	94.64	59	68.18	1	21.50	53	4.11	53	0.85
Տավուշ	36	4.47	3	0.19	18	0.40	15	3.88	138	31.76	22	24.91	4	1.14	37	2.58	75	3.13
Ընդամենը	380	61.71	17	3.78	159	31.69	204	26.24	1997	1812.19	568	1563.06	79	52.75	560	160.85	790	35.53

Հանրապետությունում 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 37 գործարքներ /20.93հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 64.7%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 74.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 64.5%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 67.4%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 67.6%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 62.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 42.3%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	103	127.07	32.2	2407.5	213.0	259	130.77	365.0	12000.0	4221.1
Ապարան	6	19.68	42.1	254.5	104.4	26	24.39	86.5	2727.3	510.4
Թալին	29	455.95	34.0	184.0	80.0	44	66.73	93.6	5494.5	486.3
Ծաղկահովիտ	2	0.15	700.0	7000.0	3850.0	22	50.72	79.5	1000.0	228.4
Արարատի մարզ										

Արտաշատ	10	27.52	69.5	2590.4	699.4	248	114.36	335.1	10833.3	2030.5
Մալիս	18	35.01	59.7	2100.8	356.5	101	72.85	200.0	11904.8	2873.5
Վեդի	6	4.69	119.9	3000.0	740.3	172	88.02	207.0	10795.1	1813.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	27	117.95	54.9	600.0	152.8	298	234.87	294.3	9090.0	1123.9
Բաղրամյան	15	63.10	33.8	797.5	120.8	79	345.69	90.6	2561.1	642.2
Վաղարշապատ	20	62.54	5.6	774.4	398.5	237	147.12	444.4	11764.7	2590.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	1.19	72.7	102.4	87.6	212	73.69	199.8	1875.0	446.2
Ճամբարակ	10	79.10	78.6	989.0	462.5	49	45.97	60.5	953.3	224.2
Մարտունի	2	3.20	106.7	2444.0	1275.4	10	2.74	51.1	2850.0	550.3
Սևան	10	16.50	44.0	315.0	151.2	31	39.19	52.2	2134.8	221.7
Վարդենիս	2	1.89	55.2	618.1	336.7	41	73.13	41.2	2575.1	370.6
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.50	70.4	70.4	70.4	136	56.77	170.4	6424.2	1033.3
Գուգարք	12	4.80	112.7	405.8	319.7	20	8.50	234.6	6065.9	1069.7
Մայիտակ	2	1.10	202.5	648.3	425.4	4	1.87	250.0	5555.5	579.5
Ստեփանավան	8	6.14	210.0	1150.0	509.6	40	36.93	90.6	1686.6	403.5
Տաշիր						93	69.60	45.3	1384.4	210.1
Կոտայքի մարզ										
Արվյան	79	113.81	45.8	1329.7	306.4	325	147.67	279.3	11942.7	4801.4
Եղվարդ	49	80.10	74.3	1430.0	458.9	299	251.96	174.4	11971.8	3331.2
Հրազդան	15	54.88	45.0	861.3	370.8	81	74.35	130.5	10256.4	1434.1
Շիրակի մարզ										
Ախուրյան	6	18.24	165.0	448.4	303.2	80	81.04	252.0	1693.1	478.1
Ամասիա	8	24.28	39.4	385.0	181.1	16	36.59	40.9	261.0	134.3
Անի	14	19.67	85.3	716.9	382.7	41	45.49	110.6	546.9	283.5
Աշոցք						35	65.79	58.5	215.8	123.9
Արթիկ						102	34.01	79.4	1428.6	219.3
Սյունիքի մարզ										
Գորիս	9	26.57	137.5	1221.0	427.7	30	26.75	92.6	1023.2	446.3
Կապան	21	101.33	40.3	1025.6	266.6	14	12.79	120.0	841.6	267.4
Մեղրի						15	3.33	193.0	3000.0	571.8
Սիսիան	1	3.00	190.0	190.0	190.0	33	29.34	46.3	1977.4	290.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	29	10.62	34.3	986.0	127.4	73	16.10	125.0	10000.0	1463.3
Վայք	30	57.57	35.4	246.0	94.2	35	15.41	58.8	1430.7	508.9
Տավուշի մարզ										
Բերդ	5	2.04	147.1	519.6	378.5	49	12.48	213.3	3783.8	477.6
Իջևան	16	21.87	49.3	14300.0	3481.0	17	6.23	267.5	9454.5	979.3
Նոյեմբերյան	1	1.00	149.8	149.8	149.8	50	39.49	46.7	7368.4	718.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների			
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	1241.8	175.0	3928.6	2630.2	184	160926.7	130.7	22200.0	2571.5
Ապարան	4	7778.0	73.3	483.4	254.0	18	19604.0	124.1	609.6	239.1
Թալին	2	1800.0	107.3	208.3	157.8	17	29642.0	63.2	1454.8	126.9
Ծաղկահովիտ						2	6760.0	60.0	214.3	75.9
Արարատի մարզ										
Արտաշատ	67	74254.0	144.0	819.7	552.8	101	94934.5	173.9	7140.3	906.5
Մասիս	12	8251.0	541.5	3107.8	1660.7	223	161030.0	187.5	25000.0	1220.4
Վեդի	1	35.4	1064.8	1064.8	1064.8	119	122748.0	126.1	5000.0	668.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	2600.0	112.0	425.3	320.8	142	147673.8	131.6	9090.9	1215.9
Բաղրամյան						11	17302.0	100.0	833.3	168.1
Վաղարշապատ	4	6555.0	1004.9	3828.0	2416.5	302	283484.0	197.4	26528.4	1544.9
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	18	21518.0	132.0	183.3	168.3	22	21042.0	186.6	1084.3	426.7
Ճամբարակ						12	11680.0	71.3	2286.2	122.1
Մարտունի	18	9308.0	112.6	133.4	115.3	62	74274.0	119.3	5000.0	272.9
Սևան	16	14202.0	372.6	503.4	439.4	16	14778.5	240.0	3110.4	200.6
Վարդենիս						9	12374.0	72.5	987.2	142.3
Լոռու մարզ										
Այվերդի	4	863.0	609.5	891.0	703.3	37	50866.0	114.3	1388.9	177.0
Գուգարք	17	9820.0	51.0	5655.4	2452.5	38	31483.0	77.9	14083.3	683.9
Սպիտակ	35	40468.0	60.0	123.6	98.8	170	221054.0	104.9	1348.3	170.8
Ստեփանավան	1	400.0	554.5	554.5	554.5	16	87772.0	88.2	1666.7	132.6
Տաշիր						4	6187.0	45.3	400.0	75.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	152	88912.2	182.5	3643.4	2266.6	301	257517.0	264.5	35353.5	2065.9
Եղվարդ	5	7344.0	226.0	1617.2	923.0	225	197544.0	173.6	27000.0	2603.2
Հրազդան	21	19220.0	38.6	4750.3	776.7	63	66573.0	117.7	34848.5	1351.4
Շիրակի մարզ										
Ախուրյան	43	11785.5	290.4	5479.5	2671.1	27	30348.0	113.6	18750.0	331.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	19	9733.1	88.0	802.7	371.2	13	17215.0	67.9	180.6	112.3
Աշոցք						3	15810.0	40.8	144.0	59.0
Արթիկ	6	2700.0	28.8	554.9	198.4	17	17350.0	111.8	5000.0	214.9
Սյունիքի մարզ										
Գորիս	1	370.0	1150.0	1150.0	1150.0	16	12030.0	112.2	1700.0	276.4
Կապան	3	1496.0	805.0	1801.4	1449.9	5	3556.0	67.9	2638.9	221.6
Մեղրի	2	740.0	350.0	370.0	360.0	10	8853.0	68.5	632.9	139.5
Սիսիան						2	4062.0	123.5	875.0	156.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	31	24600.0	45.4	765.0	399.8	24	24995.0	96.7	7659.6	373.0
Վայք	22	16500.0	854.0	854.0	854.0	17	16457.0	120.7	1448.3	144.1
Տավուշի մարզ										
Բերդ						3	395.0	75.8	810.0	92.7
Իջևան	34	25621.5	79.2	2500.0	1468.6	50	45821.0	74.1	14423.1	479.2
Նոյեմբերյան	3	149.0	600.0	1330.0	1085.0	6	7130.0	125.0	1948.1	160.2

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 106 գործարքներ 29.55 հա մակերեսով, ընդ որում 73-ը՝ Լոռու /10.10 հա/, 31-ը՝ /19.30 հա/ Շիրակի և 1-ական՝ /0.04 հա/ Արարատի, /0.11 հա/ Կոտայքի մարզերում:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 10204 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 82.4%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 17.4%-ով:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 590 բնակարանների, 382 անհատական բնակելի տների, 4073 հասարակական, 558 արտադրական նշանակության օբյեկտների, 4173 միավոր /23104.55 հա/ հողերի, 427 ավտոտնակների և 1 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 269 վարձակալության գործարքների, այդ թվում 62 միավոր /34.21 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 5.9%-ով:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 23104.55 հա հողերից 70.70 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 23033.85 հա հողերի 362.45 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 82.90 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 6855.18 հա, որից 6607.62 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 6608.09 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	7	695.77	134	516.67
Արարատ	21	3751.98	398	1043.63
Արմավիր	6	22.27	93	318.62
Գեղարքունիք	8	596.26	785	3325.14
Լոռի	14	804.00	127	869.88
Կոտայք	0	0.00	57	505.32
Շիրակ	3	209.00	534	1416.07
Սյունիք	13	528.81	393	6078.81
Վայոց Ձոր	0	0.00	127	1659.07
Տավուշ	0	0.00	32	56.30
Ընդամենը	72	6608.09	2680	15789.51

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 10069 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.5%-ը: Գրավադրման

գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 50.6%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.1%/, առանձնատների /22.7%/. հասարակական նշանակության օբյեկտների /13.8%/ և հողերի /13.0%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4706 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ նվազել է 41.0%-ով:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 532 գործարքներ, որից 388-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 78.4%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 11.1%-ն՝ անհատական բնակելի տների, 5.6%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.9%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.9%-ն՝ ամառանոցների, 0.2%-ն՝ ավտոտնակների և 1.9%-ը՝ հողերի նկատմամբ: 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 74.3%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 71.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 80.4%-ով:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 4556.82 հա մակերեսով հողեր, որից 76.30 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 94.2% կամ 4291.25 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.38 հա: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 3128.28 հա, որից 3123.70 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 26 և 8 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.03%: 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 55.8%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքի մարզում /32.4%/:

2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 17883 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 8.3%-ով:

Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.8%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /33.5%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն